

«Հայաստան -Վրաստան . հանրակրթական կամուրջներ »

Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի և Թբիլիսիի թիվ 98 հանրային դպրոցի միջև հաստատված բարեկամությունը և համագործակցությունը արդեն մի քանի տարվա պատմություն ունի:

ՀՀ կրթության նախարարության հավանությանն արժանացած «Հայաստան-Վրաստան. հանրակրթական կամուրջներ» համագործակցության

1 / 7

«Հայաստան -Վրաստան . հանրակրթական կամուրջներ »

ծրագրի շրջանակներում, այս օրերին Թբիլիսիի թիվ 98 դպրոցում հյուրընկալվում են Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի սաներն իրենց ուսուցիչների և տնօրենի հետ:

Երևանցի հյուրերը մարտի 27-ին այցելեցին Վիրահայոց Թեմի «Հայարտուն» կենտրոն: Հանդիպմանը ներկա էին Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանում ՀՀ դեսպանության առաջին խորհրդական Լևոն Թորգոմյանը

2 / 7

«Հայաստան -Վրաստան . հանրակրթական կամուրջներ »

, Երևանի Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանը, Թբիլիսիի թիվ 98 հանրային դպրոցի տնօրեն Գիորգի Մոմցեմլիձեն, Թբիլիսիի քաղաքապետարանի Սոլիկո Վիրսալաձեի անվան թիվ 1 նկարչական արվեստի դպրոցի տնօրեն Քեթևան Բարիաբաշվիլին, թբիլիսեցի և երևանցի դպրոցականներ: Աշոտ Բլեյանը հավաքվածներին ներկայացրեց Սեբաստացի կրթահամալիրի գործունեությունը, այն

3 / 7

«Հայաստան -Վրաստան . հանրակրթական կամուրջներ »

նախագծերը, որ իրականացվում են Թբիլիսիի թիվ 98 դպրոցի հետ համատեղ, պատմեց առաջիկայում իրականացվող ծրագրերի ու պլանների մասին:

Կրթահամալիրի տնօրենը առանձնահատուկ խոսեց վրացերենի ուսուցման դրվածքի մասին, որը եվրոպական լեզուների շարքում որպես երրորդ օտար լեզու ընտրում են իր ղեկավարած կրթօջախի սովորողները: Օրինակ հանդիսացավ Մեղրիից Երևան տեղափոխված Շահանե Խաչիկյանը,

4 / 7

«Հայաստան -Վրաստան . հանրակրթական կամուրջներ »

ով վրացերենով պատմեց թբիլիսյան անմոռանալի օրերի մասին և կատարեց վրացերեն երգ: Այնուհետև բանախոսները արժևորեցին բարեկամության այն կամուրջները, որոնք կառուցվում են այս երկու կրթօջախների սաների համատեղ միջոցառումներով, փոխադարձ այցելություններով և բարեկամությամբ:

Թբիլիսիի քաղաքապետարանի Սոլիկո Վիրսալաձեի անվան թիվ 1 նկարչական արվեստի դպրոցի տնօրեն Քեթևան Բարիաբաշվիլին, ողջունելով երկու դպրոցների բարեկամական համագործակցությունը

5 / 7

«Հայաստան -Վրաստան . հանրակրթական կամուրջներ »

, ցանկություն հայտնեց Երևանի Սեբաստացի կրթահամալիրի օրինակով իրենց դպրոցում ևս ներդնել հայերենի ուսումնասիրության նորույթը:

Վիրահայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհի Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը օրհնության իր խոսքում անդրադարձ կատարեց քրիստոնյա այս հնագույն ազգերի հարուստ մշակույթի և դարավոր բարեկամության վրա: Նա իր աջակցությունն ու օգնությունը խոստացավ Ս. Վիրսալաձեի անվան դպրոցի ղեկավարությանը հայերենի

6 / 7

«Հայաստան -Վրաստան . հանրակրթական կամուրջներ »

ուսուցում ներդնելու գործում:

Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի սաները ներկայացրեցին տեսանյութ և կատարեցին էտյուդներ:

Երևանցի հյուրերին իրենց գեղեցիկ երգը նվիրեցին մենակատարներ Աննա Պողոսովան և Հենրիխ Պետրոսյանը:

7 / 7